ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/137

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8321-2021 գրությամբ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.05.2021թ. թիվ Ե-809-21 գրության հիման վրա, 25.05.2021թ. թիվ 26/26-1/8321-2021 գրությամբ նախաձեռնել է «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.05.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մայիսի 26-ին ՀՀ ֆինանսների նախարարության ՍՑ-ՆԳ-2021/137 գրությամբ նախաձեռնվել է ընթացակարգ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ինչի հետ կապված հայտնում եմ Ձեզ, որ 2021 թվականի մայիսի 07-ին մասնակցել ենք ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցմանը, և այն մասին, որ մեր հանդեպ նման վարույթ է սկսվել իմացել եմ վերոհիշյալ գրությունից, քանի որ նիստերի բացումը եղել է 2021 թվականի մայիսի 07-ին, իսկ գնումների մասին օրենքով սահմանում է, որ եթե անհամապատասխանություն կա հայտում, որը ենթակա է շտկման, ապա շտկման մասին ծանուցումը ուղարկվում է նիստերի բացման օրը, հետևաբար երբ ես նիստերի բացման օրը նման ծանուցում չեմ ստացել, ապա չեմ ակնկալել, որ կա նման խնդիր և հետագա ծանուցումներին ուշադիր չեմ եղել, որը եղել է նիստերի բացումից երեք օր անց՝ մայիսի 10-ին:

Հարգելի պարոն Ներսիսյան, վերոգրյալից պարզ է դառնում, որ եթե պահպանվեր ընթացակարգերը և ժամանակին մեզ ուղարկվեր շտկման ծանուցումը մենք այս խնդրի առաջ չէինք կանգնի, իսկ մայիսի 7-ին նման ծանուցում չստանալով վստահ եմ եղել, որ հայտում թերություններ չեն արձանագրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ խնդրում եմ Ձեզ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված՝ 26.05.2021թ. ՍՑ-ՆԳ-2021/137 ընթացակարգով՝ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել»:

«Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/137 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.05.2021թ. թիվ Ե-809-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում ենք, որ 2021թ-ի մայիսի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի շենքում ժամը 09:15-ին տեղի է ունեցել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և կենտրոն» հիմնադրամի կարիքների համար «օդորակիչների և հեռուստացույցների» ձեռքբերման ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Էյչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի (Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Սուրենավան, Արցախի 15 տ, հեռ. +374 98 551332, էլ. հասցե՝ hvac. service. armenia@gmail. com, ՀՎՀՀ՝ 04230785) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

«Էչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝

ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի, թերի է, մասնավորապես՝ նշված չէ արտաքին սարքի մոդելը:

ապրանքի ամբողջական նկարագրում, համաձայն՝ Հավելված 1.1-ի, «Էչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մոդելի տեխնիկական պարամետրերը «Էյչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի պաշտոնական կայքում ուսումնասիրելիս (հղում՝ http: //www. mitsubishitech.co.uk/Data/Mr-Slim_Indoor/PKA-RP/2016/Leaflet/PKA- RP_Standard_Inverter_IPh/PKA-RP100KAL. pdf) առկա են հետևյալ տարբերությունները.

1. Աղմուկի մակարդակի սահմանների մասով սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ 39-45 dB, սակայն «Էյչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի դեպքում այն 41-49 dB է:

2. Սեզոնային էներգաարդյունավետության գործակիցը սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ 7,1/A++, սակայն «Էյչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի դեպքում այն 4.8/A է:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ օրով և 10.05.2021թ-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ, «Էյչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի կողմից 11.05.2021թ-ին գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Էյչ վի էյ սի Սերվիս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/137 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/137 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/137 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 07.05.2021թ. կայացած նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ:

3. 07.05.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 10.05.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից չեն շտկվել և որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8321-2021 գրությունը, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 18.05.2021թ. թիվ Ե-809-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը <u>նույն</u>***

<u>օրը</u> դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 07.05.2021թ. կայացած նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ:

07.05.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 10.05.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից չեն շտկվել և որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին:

Անդրադառնալով Ընկերության կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ նիստերի բացումը եղել է 2021 թվականի մայիսի 07-ին, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանում է, որ եթե անհամապատասխանություն է արձանագրվում հայտում, որը ենթակա է շտկման, ապա շտկման մասին ծանուցումն ուղարկվում է նիստերի բացման օրը, հետևաբար Ընկերությունը, երբ նիստերի բացման օրը նման ծանուցում չստանալով, չի ակնկալել, որ կա նման խնդիր և հետագա ծանուցումներին ուշադիր չի եղել, ծանուցումն ուղարկվել է նիստերի բացումից երեք օր անց՝ մայիսի 10-ին, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը,

տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

<u>Ընդ որում համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:</u>

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***<u>հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում կրում է նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով Մասնակցին ծանուցելու պարտավորություն</u>***:

Ընդ որում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Մինչդեռ Ընթացակարգին առնչվող փաստաթղթերի, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***<u>07.05.2021թ.</u>*** նիստի ընթացքում արձանագրել է Ընկերության կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություններ, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանը ծանուցել է

10.05.2021թ., այսինքն՝ վերը շարադրված իրավական նորմերով սահմանված ժամկետների և իրավական որոշակիության սկզբունքների պահպանման պահանջների խախտմամբ, որպիսի պայմաններում Ընկերությունը չի ունեցել որևէ իրավական ակնկալիք առ այն, որ իրեն կարող է ներկայացվել շտկում կատարելու պահանջ և արդյունքում վերջինս զրկվել է օրենքով իրեն վերապահված իրավունքն իրացնելու, այն է՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից, և արդյունքում հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները մեկնաբանվել են ի վնաս Ընկերության և հանգեցրել վերջինիս հայտն անբավարար գնահատելուն:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8321-2021 գրությամբ «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**